

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Իմաստուն Սողոմոն Թագաւորը



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Adapted by: Ruth Klassen
Alastair Paterson

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.

Դաւիթ թագաւոր Աստուծոյ մեծ մարդն էր: Իր
թագաւորութեան ատեն Իսրայէլ տասն անգամ
աւելի մեծցած էր քան Սաուլի թագաւորութեան
ընթացքին:




Ան այլեւս չէր կրնար կառավարել: Դաւիթ ծերացած էր եւ յոգնած եւ հիւանդ, իր կեանքը աշխարհի վրայ այլեւս կը հասնի իր աւարտին:



3

Դաւիթի տղոցմէ, Ադոնիա, Իսրայէլի ժողովուրդին ըսաւ, որ հիմա ինք թագաւոր պիտի ըլլայ: Թէեւ իր անունը "Իմ Տէրս Աստուածն է" կը նշանակէ, Ադոնիա բարի մարդ մը չէր: Ան փորձեց գահը գողնալ, գիտնալով, որ Դաւիթ շատ տկարացած էր եւ չէր կրնար գինջ դիմադրել: Սակայն Աստուած տարբեր ծրագիրներ ուներ:



4

Դաւիթին կինը Բերսաբէ գիտեր, որ իր տղան Սողոմոնը թագաւոր պետք է որ ըլլայ: Ան Դաւիթին պատմեց Ադոնիայի ծրագրին մասին: Հիւանդ վիճակով Դաւիթ իր շուրջ հաւաքեց կառավարիչները եւ հանրութեան մէջ Սողոմոնը թագաւոր հռչակեց Իսրայէլի վրայ:




5

Սողոմոն այլեւս որեւէ մէկ հարց չուներ Ադոնիա հետ, որովհետեւ Իսրայէլի ժողովուրդը կը հաւատար Դաւիթի: Դաւիթ ըսաւ, որ Սողոմոն ընտրուած էր Աստուծմէ ըլլալու համար իրենց վրայ թագաւոր: Կարճ ժամանակ ետք Դաւիթ մահացաւ:



6

Նախքան մեռնիլը Դաւիթ խօսեցաւ Սողոմոնի, որ ինչպէս պետք էր ան հնազանդի Աստուծոյ եւ ըլլար բարի թագաւոր: "Աստուծոյ ճամբով քալէ, որպէսզի զարգանաս ամէն ինչի մէջ, որ կ'ուզես ընել", ըսաւ Դաւիթ իր տղուն: Այդ լաւ խրատ էր, ետքը Սողոմոն նստաւ իր հօր գահին վրայ եւ իր թագաւորութիւնը հիմնուեցաւ ամուր հիմերու վրայ:



7

Երեկոյ մը Սողոմոն երագ մը տեսաւ: Իր երագին մէջ Աստուած երեւցաւ իրեն եւ ըսաւ. "Ուզէ՛, ինչ որ կ'ուզես, որ տամ քեզի": "Ի՞նչ կրնայի պահանջած ըլլալ":



8

Սողոմոն խնդրեց իմաստութիւն, որպէսզի ըլլայ լաւ թագաւոր: Այս երիտասարդ թագաւորին խնդրանքը

գոհ պահեց Աստուծոյ: Սողոմոն առաւ այն ինչ որ խնդրած էր, սակայն Աստուած անոր խոստացաւ մեծ հարստութիւն եւ պատիւ:



9


Շատ երկար ժամանակ չանցաւ երբ ժողովուրդը նկատեց Սողոմոնի իմաստութիւնը: Օր մը երկու մայրեր եկան իր մօտ, մէկը մանուկով մը:

"Այս կնկան տղան մեռաւ երեկոյեան եւ ան իր մեռած մանուկը իմ ողջ մանուկովս փոխարինեց", ըսաւ կիներէն մին: "Ո՛չ: Բայց ողջը իմ տղաս է, եւ մեռածը քուկո՛ր", ըսաւ միւսը: Ի՞նչպէս կրնար թագաւորը գիտնալ, թէ ո՞ր մայրը իրականութիւնը կ'ըսէր:



10

Ետքը թագաւորը ըսաւ. "Սուր մը բերե՛ք ինծի": Եւ անոնք սուր մը բերին թագաւորին: Ի՞նչ կը կարծես, որ թագաւորը կը ծրագրէր ընել սուրով:



11

Եւ թագաւորը ըսաւ. "Բաժնեցե՛ք ապրող մանչուկը երկուքի եւ մէկ կետը տուե՛ք մէկուն, իսկ միւս կետը միւս կնկան": Ողջ տղուն մայրը ըսաւ. "Ով տեր իմ, իրեն տուր ապրող մանչուկը եւ չ'ըլլայ զինք մեռցնես":




12

Բայց միւս կինը ըսաւ. "Թող ո՛չ ինծի, ո՛չ ալ քեզի ըլլայ, բայց թող բաժնենք պզտիկը":




13

Ուրեմն թագաւորը ըսաւ. "Առաջին կնկան տուե՛ք պզտիկը: Ան է մայրը": Եւ ամբողջ հարայելը լսեց այդ դատողութեան մասին, եւ շատ բարձր գնահատեցին ու յարգեցին թագաւորը: Անոնք տեսան, որ Աստուծոյ իմաստութիւնը անոր մէջն է:



14

Իսրայելի ժողովուրդը տաճար չուներ, որուն մէջ պաշտեր Աստուծոյ: Երբ Դաւիթ ծրագրեց կառուցել Աստուած ըսաւ. "Քու որդիդ պիտի կառուցէ տունս իմ անունիս համար",




ուրեմն
Սողոմոն
սկսաւ կառուցել
սքանչելի տաճար մը
Երուսաղէմի մէջ:

15


Եօթը երկար
տարիներ
տեւեցին
տաճարի
շինութիւնը:

Բայց եկաւ այն մեծ
օրը, ուր ամէնքը
ժողուած ունկնդրեցին
Սողոմոնի նուիրումը
այս տաճարին տիրոջը:



16

Սքանչելի աղօթք
մը ետք, թագաւորը
եւ ժողովուրդը
ուրախութեամբ
հազարաւոր
զօտեր



մատուցեցին
եւ մեծ խրախճանք
մը սարքեցին երկու
շաբթուան վրայ:

17

Այսկէ ետք, Աստուած
երեւցաւ անգամ մը եւս
Սողոմոնի եւ խոստացաւ
զինք օրհնել եւ Իսրայէլը
այնքան ատեն որ անոնք
Տիրոջ կը հնազանդէին:




18

Դժբախտաբար ոչ Սողոմոն եւ ոչ ալ
ժողովուրդը տեւական կը հնազանդէին
Աստուծոյ: Թագաւորը ամուսնացաւ շատ
մը կիներու հետ, որոնց Աստուած չէր
ուզէր: Անոր հեթանոս, կիները անոր
սիրտը դէպի կուռքերուն դարձուցին,
եւ իր սիրտը հաւատարիմ չեղաւ
Տիրոջ իր Աստուծոյ,
ինչպէս որ էր իր հօր
Դաւիթի
սիրտը:




19

Երբ Սողոմոն սպասեց իր առիթը հնազանդելու
Աստուծոյ Յերոբովամ իր սպաներէն մէկը
տարօրինակ բացատրութիւն մը ունեցաւ:




20

Մարգարե մը անոր ըսաւ, որ Աստուած պիտի բաժնէ Սողոմոնի թագաւորութիւնը եւ Յերոբովամ պիտի իշխէ տասներկուքէն տասը տոհմերուն վրայ: Յերոբովամ շուտով Եգիպտոս փախաւ: Ան գիտցաւ, թէ Սողոմոն պիտի մեռցնէ իրեն եթէ մնար:




21

Վերջապէս Սողոմոն մահացաւ: Իր որդին, Ռոբովամ տուրքի ենթարկեց ժողովուրդը աւելի քան իր հայրը: Տասը տոհմեր ըմբոստացան եւ Յերոբովամ ըստրեցին իբր իրենց առաջնորդ:



22

Սողոմոնի հօր թագաւորութիւնը բաժնուեցաւ երկուքի, ճիշդ ինչպէս որ Աստուծոյ մարգարէն ըսած էր: Աստուած չէր կրնար օրհնել անհնազանդութիւնը:



23

Իմաստուն Սողոմոն թագաւորը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

1 Թագաւորաց 1 - 12

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

24

Վերջ

22

60

25

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

26